

փոքր՝ վերը խաչելութեան տեղւոյն՝ Գողգոթայի ետեւը: Եւ այս փոքրիկ եկեղեցիին մէջ կը տեսնուի քառակուսի զարդարեալ փոսիկ մը, ուր ըստ աւանդութեան, կ'ըսուի թէ Հայր Աբրահամ ուղեց զոհել իր Իսահակ որդին, և նայելով իր ետեւ տեսաւ Սաբեկայ ծառէն կախուած խոյը. այդ պատճառաւ կոչուեցաւ Հայր Աբրահամ: Այս վանքը ժամանակ մը՝ Հայոց եւ Հապէշներու ձեռքը կը մնար, այժմ Յունաց ձեռքն է: Յոյները ցոյց կուտան ձիթենի ծառ մը, իբր Սաբեկայ ծառը (Հան. էջ 217):

Այս ծառը յունական աւանդութեան մը համաձայն, այն տունին էր, որուն ճիւղերէն խոյ մը եղջիւրներէն կախուած էր, երբ Աբրահամ պիտի զոհէր Իսահակը. սակայն, Հապէշները կը բողոքեն Յունաց այս աւանդութեան դէմ, և կը պնդեն թէ ճշմարիտը միայն իրենց վանքին մէջ գտնուած ձիթենին է (Han. W. էջ 73-74):

#### Բ. ԽԱՅԻ ԿԱՄ ՉԱՐԿԱՐԱՆԱՅ ԶԱՆԱՊԱՐՀ

Խաչի կամ Չարչարանաց աննապարհ անունը կը տրուի այն ճամբուն՝ որուն մէջէն մեր Տէրը խաչը շալակին քալեց Պիղատոսի ապարանքէն Գողգոթա:

Արդարեւ բաւական կը յարմարի Աւետարանի պատմուածքին այս դրութիւնը զոր կրնանք անուանել արեւմտեաններու Խաչի ճանապարհը. ամէն մարդու ճաշակին յարմար չէ: Այն արեւելեան թաղը ուր Տաճարականները կը բնակէին Տաճարին ծառայութեան համար, իսկոյն ունեցան խաչի ճանապարհը հակառակ Ս. Սիոնի խաչի ճանապարհին: